

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 58/6

28 դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.12.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Կարեն Զախարյանի 10.12.2012թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատի ՏՀՏ 06.12.2012թ. հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2212683 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատի ՏՀՏ պետի 09.11.2012թ. թիվ 2212683 հանձնարարագրի, ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Կարեն Զախարյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն՝ հսկիչ գնում: Արդյունքում 06.12.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2212683 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է հետևյալը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատի ՏՀՏ ընթացիկ հսկողության բաժնի գլխավոր տեսուչ Արմեն Հովհաննիսյանս, Գագիկ Ղարիբյանս և հարկային տեսուչ Դավիթ Մելքումյանս 06.12.2012թ-ին ժամը 11:38-ին Ա/Ձ Կարեն Զախարյանին պատկանող Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան 59/3 հսցեում գտնվող արտաքին հասարակական սննդի կետից կատարեցինք հսկիչ գնում՝ 10 հատ քաղցրաբլիթ 500 դրամ ընդհանուր արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գումարը Ա/Ձ Կարեն Զախարյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի կտրոն չտրամադրվեց: Այսուհետև ժամը 11:38-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով և մեր պահանջով չմուտքագրված գումարը՝ 500 դրամը, մուտքագրվեց ՀԴՄ և ժամը 11:38-ին նորից դուրս բերվեց Z հաշվետվություն 500 դրամ հասույթով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ա/Ձ Կարեն Զախարյանի գանգատում մասնավորապես նշված է.

Հայտնամ եմ, որ սույն թվականի դեկտեմբերի 6-ին կազմված հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2212683 արձանագրությունը կազմվել է հսկիչ գնում կատարած հարկային տեսուչների կողմից առանց որևէ հիմնավոր ապացույց ներկայացնելու այն մասին, որ իրենք իսկապես կատարել են հսկիչ գնում նշված ժամում, նշված վայրից: Ինչի հետևանքով արձանագրությունը չի ընդունվել իմ կողմից:

Համաձայն 09.11.2012թ-ի թիվ 2212683 հանձնարարագրի, հսկիչ գնում իրականացնելու իրավունք ունեին միայն հարկային տեսուչներ՝ Արմեն Հովհաննիսյանը, Գագիկ Ղարիբյանը և Դավիթ Մելքումյանը: Հայտնում եմ, որ նշված անձանցից և ոչ մեկը չի կատարել քաղցրաբլիթի գնում, որը կարող են փաստել տեղի աշխատակիցները: Ավելին, կազմված արձանագրությունից անգամ պարզ երևում է, որ կատարած հսկիչ գնումը, ՀԴՄ կտրոն չտրամադրելու մասին հիմնավորման գործընթացը, Z հաշվետվության հանելը, հետո մուտքագրելը, նորից Z հաշվետվության հանելը և դրա հետ կապված ողջ գործընթացը հարգարժան տեսուչները կատարել են նույն 11:38 րոպեին, որը տրամաբանական չէ: Նույնիսկ նամակով ուղարկված արձանագրության օրինակի մեջ չի ներկայացվել նշված հսկիչ գնման գործընթացը հիմնավորող ոչ մի տեղեկություններ, տվյալներ և ՀԴՄ կտրոնի պատճեններ: Հարկ է նշել նաև, որ իմ հարցին, թե ով է կատարել գնումը և ինչպես է արձանագրվել խախտումը, տեսուչները պատասխանեցին,

որ <դա հնարավոր է միայն դատարանում>: Ուստի պահանջում եմ ներկայացնել հիմնավոր ապացույցներ հսկիչ գնում կատարելու մասին և հսկիչ գնում կատարող անձի վերաբերյալ:

Խնդրում եմ ընդունել իմ առարկությունները, ներկայացնել պահանջվող ապացույցները և հիմնավորել: Այլապես թիվ 2212683 արձանագրությունը ենթակա է չեղյալ համարման:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Կարեն Զախարյանի և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում ուսումնասիրությունն իրականացրած անձինք նշեցին, որ 06.12.2012թ-ին ժամը 11:38-ին Ա/Ձ Կարեն Զախարյանին պատկանող արտաքին հասարակական սննդի կետից կանխիկ դրամով կատարել են հսկիչ գնում՝ գնվել է 10 հատ քաղցրաբլիթ 500 դրամ ընդհանուր արժողությամբ: Սակայն, գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի կտրոն չի տրամադրվել: Այնուհետև ժամը 11:38-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով, վերականգնվել է չմուտքագրված 500 դրամը և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 500 դրամ հասույթով:

Ուսումնասիրությունն իրականացրած անձինք Հանձնաժողովին ներկայացրեցին ուսումնասիրության ընթացքում ՀԴՄ-ից դուրս բերված ապացույցների (Z հաշվետվություն, կտրոն) օրինակները:

Ուսումնասիրությունն իրականացրած անձինք նշեցին նաև, որ հսկիչ գնումը կատարելու ընթացքում Ա/Ձ Կարեն Զախարյանը ներկա չի գտնվել: Խախտման փաստն արձանագրելուց հետո Ա/Ձ Կարեն Զախարյանը ներկայացել է և վաճառողից փորձել է տեղեկանալ, թե եղել է արդյոք խախտում, թե չէ: Ուսումնասիրությունն իրականացրած անձանց պնդմամբ, վաճառողը Ա/Ձ Կարեն Զախարյանին հայտնել է իր կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու վերաբերյալ, սակայն ըստ Ա/Ձ Կարեն Զախարյանի, նման բան տեղի չի ունեցել:

Քննարկվող դեպքում ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են Ա/Ձ Կարեն Զախարյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները խախտելու հանգամանքը, որն առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ